ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Մ Յ Ո Ւ Ն

16 հունվարի 2013թ. թիվ 12

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՋՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թ. դեկտեմբերի 28-ի «Վարչական հսկողության 2013 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 190-Ա հրամանը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

2013թ. Լոռու մարզի համայնքներում վարչական հսկողություն իրականացնող հանձնաժողովին՝

1. ՀՀ Լոռու մարզի Ջրաշեն համայնքում ս/թ հունվարի 24-ից 25-ը ներառյալ իրականացնել վարչական հսկողություն:

2. Վարչական հսկողությունն իրականացնել համայնքի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից 2011-2012թթ. ընթացքում իրականացված լիազորությունների նկատմամբ:

3. Ստուգումն իրականացնել ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2012թ. հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության և կադրային գործի վարման մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» թիվ 02-Ն հրամանով հաստատված մեթոդական ուղեցույցի համաձայն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2013թ. հունվարի 16
ք.Վանաձոր